ՃՂԱ.

Դէպք մը թրքական պատմութենէ։

Պատուելի և սիրելի եղբարց իմոց՝ հայր անտոնիի, հայր դանիէլիի, եղբայր մեսրոպիի, և եղբայր անանիայիի խնդալ ի տէր

... Ի սէլանիկ հրէայք սպանին զէմիր մի. իբրև զայն լուան տաճիկք, առհասարակ խռովեցան. այլ զի փաշայ տեղւոյն էր իմաստուն, առժամայն հրաման ետ բերել զէմիրն սպանեալ առաջի իւր. իբրև հրամանն կատարեցաւ, ետ զնա կշռել. և գտաւ ծանրութիւն նորա վաթսուն օխայ. նոյնժամայն հրաման ետ ըստ կշռոյ նորա կախել զվաթսուն հրէայս ի մեծամե[ծաց][1] անտի. անդ էր տեսանել զձայն հիսայից և զգոյժ անտալա[...]ից։ Ահագին վարդապետն եղև կաթողիկոս. վէզիրն նոր փոխեցաւ. գրեթէ յօր գալստեան իմոյ պէշիքթաշ ի ցերեկի եանղըն եղև. սակայն փութով չիջուցին։ Վէնէտիկու էլչին փառաւոր ալայ արար։...

Ցամի տեառն 1756 — *Նուաստ ծառայ*
Մայիսի 19 [*Կ. Պոլիս*] — *Մկրտիչ վարդապետ*

ՃՂԲ.

Այս թղթոյն մէջ Մծբնայ Հայրապետին վրայօք կը խօսուի դարձեալ։ Հ. Ստեփաննոսի խնդրանօք Հ. Մատթէոս Եւդոկիացւոց ձեռք բերած արդիւնքը կը ցուցադրուի թէ՛ այս՝ և թէ յաջորդ նամակին մէջ. և որ աւելի կը շահագրգռէ՝ խնդրոյս շարժառիթները կ'իմանանք նաև վաւերագրէս։

Ա.

Վերապատուելոյդ Տեառն տեառն Հայր Մատրէոսի Աստուածաբանուրեան Վարդապետի բազում սիրով ողջոյն

Ընկալայ զգրեալդ ինձ ի մայիսի 8. նաև արդէն եհաս ի ձեռն Վեհալուստր Նախորդին շնորհալի գիրն ձեր, և թուղթն հաւաքեալ յիշատակութեանց զսրբոյն Յակոբայ Հայրապետին ի հեղինակաց հայոց. և յոյժ շնորհակալ եմք. զի թէպէտ այս ոչ եղև բաւական համարեալ, սակայն այսու զոնէ տեղեկացեալ ծանեաք զպատշաճաւոր գրեանս նոցին հեղինակաց, և զպարունակեալսն, և են չորս առաջինք այսինքն Մովսէսի Խորենացւոյն, Բուզանդեան պատմագիրքն, հայոց այսմաւուրն, և ճառընտիրն։ Արդ ի չորից այսցանէ գրեանց հարկաւոր է որոշ որոշ զպատմութիւնս նորին սրբոյն յակոբայ ամբողջ օրինակելով գրել գիսկական բանսն ըստ նկարագրին, թէ և երկար իցեն, և լինիցի մեծագոյն տետր. և յեղեալ զբնաւսն յիտալիական բարբառ, հայերէն և իտալերէն ի միասին յղել ուղղակի առ մօնսիյնօր Անդօնելլի ի Հռոմ, որքան չուտով կարիցէ լինիլ։ Եւ ինքն մօնսիյնօր ամենայն սրտի յօժարութեամբ ցուցանելոց է զառատաձեռնութիւն իւր վասն այնքան աշխատասիրութեան գործոյս, զոր և կարէք կատարել ի ձեռն այլոց

1. *Այս և յաջորդ կարթագիծը՝ պատռած մասերը կը ցուցնէ։*